ԸՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ ԵՐԵՎԱՆ ԵԿԱԾ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԱՄԱԳՐԱԳԱՔԱՅԻՆ ՀԱՎԱՔԸ

Հուլիսի 29-ին Հայֆիլհարմոնիայի համերգային դահլիճում արտակարգ աշխուժություն էր տիրում։ Այստեղ էին հավաքվել արտասահմանից հայրենիք վերադարձած հայ երիտասարդները։ Սովետական նոր քաղաքացիներին հանդիպելու համար եկել էին մայրաքաղաքի գործարանների, ֆաբրիկաների, բարձրագույն ուսումնական հաստատությունների շատ երիտասարդներ։

Բոլորի տրամադրությունը բարձր է ու տոնական։ Բեմի վրայից հայրաբար ժպտում է ժողովուրդների առաջնորդ, երիտասարդության սիրելի բարեկամ ընկեր Ստալինի մեծադիր նկարը։

Նախագահության սեղանի շուրջն են ՀԼԿԵՄ Կենտկոմի քարտուղար ընկ. Գ. Ալեքյանը, Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահ ընկ. Ս. Սահակյանը, ՀԼԿԵՄ Կենտկոմի և Երքաղկոմի քարտուղարները, արտասահմանից հայրենիք վերադարձած հայ երիտասարդության ներկայացուցիչները։

Բացվում է հավաքը։ Ամբիոնի վրա է Հայաստանի ԼԿԵՄ Կենտրոնական Կոմիտեի քարտուղար ընկ. Գ. Ալեքյանը։

Հայաստանի կոմերիտմիության անունից ջերմորեն ողջունելով հայրենիք վերադարձած հայ երիտասարդությանը, ընկեր Ալեքյանը նրանց պատմում է Ստալինյան մեծ Կոնստիտուցիայի մասին, այդ Կոնստիտուցիայով սովետական քաղաքացիներին տրվող աշխատանքի, կրթության, հանգստի իրավունքների մասին, այն նվաճումների մասին, որ Սովետական Հայաստանի աշխատավորները բոլշևիկյան պարտիայի ղեկավարությամբ ձեռք են բերել անցած 25 տարվա ընթացքում։ Զեկուցողը պատմում է Ստալինյան նոր հնգամյա պլանի մասին։ Այդ պլանը անճանաչելի կդարձնի նաև մեր ռեսպուբլիկան, նրա մայրաքաղաքը։ Հայաստանի աշխատավորությունը, նրա երիտասարդությունը, այդ թվում նաև ներգաղթած հայ երիտասարդությունը, պատվով կկատարեն Ստալինյան մեծ նախագծումները։

Ամբիոն է բարձրանում Բեյրութից եկած 23-ամյա երիտասարդ Մ. Թյուֆենքչյանը։

— Այսօր,—ասում է նա,—ես ինձ ամենաերջանիկն եմ զգում գտնվելով իմ հայրենի հողի վրա։ Իրականացած է իմ երազը։ Իմանալով ներգաղթի մասին, ես առաջինը ցուցակագրվեցի Հայաստան գալու համար։ Հայրենիքը թանկ է ամեն ինչից։

— Այդ հնարավորությունը, — ասում է երիտասարդը ,— մեզ տվեց սովետական իշխանությունը։ Նա չէր մոռացել օտարության մեջ գտնվող հայերի մասին։ Դրա համար ես և ինձ հետ եկած բոլոր երիտասարդներս շնորհակալություն ենք հայտնում հայր Ստալինին։

Խլույթ է ունենում արտասահմանից հայրենիք վերադարձած երիտասարդ ճարտարապետ Ե. Բեդևյանը։ Նա մեծ հիացմունքով է պատմում սովետական Հայաստանի նվաճումների մասին։

— Մենք եկել ենք այստեղ,—ասում է նա,—ձեզ հետ միասին աշխատելու, կատարելու Ստալինյան հնգամյակի մեծ պլանը։ Մենք ոչ մի ջանք չենք խնայի, որպեսզի Հայրենիքը դառնա է՛լ ավելի ծաղկուն, է՛լ ավելի բարգավաճ երկիր։

Բեդևյանը իր ելույթը վերջացնում է ընկեր Ստալինին նվիրված իր բանաստեղծության արտասանությամբ։

Մայրաքաղաքի երիտասարդության անունից հայրենադարձ երիտասարդներին ողջույնի խոսք է ասում Երևանի Զերժինսկու անվան Դազգահագործիքաշինական գործարանի ԼԿԵՄ կոմիտեի քարտուղար ընկ. Ա. Մանուկյանը։

Հավաքի մասնակիցները մեծ հետաքրքրությամբ են լսում Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահ, ժողովրդական ուսուցիչ ընկ. Սիմակ Սահակյանի ելույթը։

— Բարի գալուստ թանկագին ընկերներ,—ասում է ընկ. Սիմակը,—անչափ ուրախ եմ, որ այեզարդ այս հասակիս բախտ ունեցա տեսնել ձեզ ձեր հարազատ հայրենիքում։ Դուք երջանիկ եք, որովհետև ապրելու եք Ստալինյան ջերմ արևի տակ։ Դուք երջանիկ եք, որովհետև սովետական քաղաքացիներ եք։

Արտասահմանից Երևան եկած հայ երիտասարդները բուռն ու երկարատև ծափահարությունների տակ ողջույնի հեռագիր են ընդունում ուղղված հայ ժողովրդի մեծ ազատարար, երիտասարդության սիրելի հայր և ուսուցիչ Գեներալիսսիմուս ընկեր Ստալինին։

Ողջույնի հեռագիր է ընդունվում նաև ուղղված Հայաստանի բոլշևիկների մարտական ղեկավար ընկ. Գր. Հարությունյանին։

Հավաքի մասնակիցների համար վերջում տրվեց ճոխ համերգ։